

Համագործակցության նոր մակարդակ ՔՈԱՖ-ի ու Արմավիրի մարզպետարանի, ինչպես նաև ՔՈԱՖ-ի ու Հացիկի համայնքապետարանի միջև

ԵՐԵՎԱՆ - Ապրիլի 12-ին «[Հայաստանի մանուկներ](#)» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) և Արմավիրի մարզպետարանը ստորագրեցին Արմավիրի մարզում ՔՈԱՖ-ի կրթական, առողջապահական ծրագրերի իրականացման, երեխայի և ընտանիքի ծառայությունների մատուցման վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր, իսկ ՔՈԱՖ-ն ու Հացիկի համայնքապետարանը՝ Հացիկում Մանկան զարգացման կենտրոնի հիմնման համաձայնագիր:

ՔՈԱՖ-ի գործունեությունը Հայաստանում դեռևս 2004թ. մեկնարկել է հենց Արմավիրի մարզից՝ Քարակերտ գյուղից: 17 տարիների ընթացքում ՔՈԱՖ-ը ոչ միայն չի դադարեցրել իր ծրագրերն Արմավիրի մարզում, այլև ընդլայնել է իր աշխարհագրությունը՝ հասնելով Արագածոտնի, Լոռու, Շիրակի ու Տավուշի մարզեր:

Չնայած որ գյուղական համայնքների զարգացման 2 խոշորագույն ներդրումային ծրագրեր, ինչպիսիք ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ն ու ՍՄԱՐԹ Դեբետոն են, իրականացվում են Լոռու մարզում, Արմավիրի մարզը շարունակում է մնալ ՔՈԱՖ-ի ուշադրության կենտրոնում: Պատահական չէ, որ մարզի 8 գյուղական համայնքներում Հիմնադրամը ծավալում է ակտիվ գործունեություն՝ ի դեմս կրթական, առողջապահական ծրագրերի, ինչպես նաև երեխայի և ընտանիքի ծառայությունների: Այս մեծածավալ ծրագրերի շարունակական իրականացման կապակցությամբ էր, որ ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Կորյունն Խաչատուրյանն ու Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր:

«Որպեսզի ավելի պատկերավոր լինի աշխատանքի այն ծավալը, որ մենք իրականացնում ենք Արմավիրի մարզի մեր շահառու 8 գյուղերում, բերեմ մեկ օրինակ՝ ՔՈԱՖ-ը այսօր այդ բոլոր գյուղերում հասանելի է դարձրել սոցիալական աշխատողի, հոգեբանի, լոգոպեդի բարձրորակ ծառայություններն այն պարագայում, երբ անգամ քաղաքներում այդ մասնագետների, հատկապես լոգոպեդների պակասը շատ է զգացվում», - նշում է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանը:

ՔՈԱՖ-ը շարունակում է ներդրումներ կատարել Արմավիրի մարզում. Հացիկ գյուղում շուտով կհիմնվի Մանկան զարգացման կենտրոն, ինչի կապակցությամբ էլ ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանն ու Հացիկի համայնքապետ Արթուր Եղիազարյանը ստորագրեցին համաձայնագիր: Կենտրոնը նախատեսված է լինելու Հացիկի ու մոտակա համայնքների 3-6 տարեկան երեխաների համար՝ միտված ապահովելու նրանց համակողմանի զարգացումն



CHILDREN
OF ARMENIA
FUND

առողջ դաստիարակության միջավայրի, ուժեղ կողմերի ակտիվացման և թույլ կողմերի ուժեղացման ճանապարհով:

«Այսօր Հայաստանում երեխաների շուրջ 70%-ն ընդգրկված չէ նախադպրոցական կրթության մեջ. մանկան զարգացման մեր կենտրոնների շնորհիվ մենք փորձում ենք հնարավորինս լուծել այս խնդիրը գյուղական համայնքներում», - եզրափակում է Կորյուն Խաչատուրյանը:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Ծիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: